ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ
ՏԻԿԻՆ ՕՎՍԱՆՆԱ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ

Հարգելի՛ տիկին Հովսեփյան,

Ի պատասխան Ձեր 03.11.2021թ. գրության՝ տեղեկացվում է, որ «Թափառող կենդանիների վնասազերծման կենտրոն» ՀՈԱԿ-ի կողմից ձեռք բերված թեստերն ունեն 97%-ից բարձր ճշտություն, ուստի ֆինանսապես նպատակահարմար չէ երկրորդ թեստը դնելը, ինչը նաև ժամանակատար է: Խնամակալով շների դեպքում՝ հիմնականում կատարվում է կրկնակի թեստավորում և հաճախ նկարահանվում է թափառող շան խնամակալին պատկանող հեռախոսով՝ ավելորդ շահարկումներից խուսափելու համար:

Միաժամանակ տեղեկացվում է, որ ՀՀ Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի 29.09.2021թ. հ.2222-Ա հրամանով ստեղծվել է միջգերատեսչական հանձնաժողով՝ Երևան քաղաքում թափառող շների մոտ լեյշմանիոզ հիվանդության վարակվածության դեպքերի քանակը, հիվանդության հետագա տարածումը կանխելու, ինչպես նաև հիվանդության ուղղությամբ ձեռնարկվող համատեղ միջոցառումները քննարկելու նպատակով:

Հանձնաժողովը ս.թ. նոյեմբերի 18-ին ժամը՝ 11.00-ին Կոմիտասի պող. հ.49/2 հասցեում նախատեսում է միջգերատեսչական խմբի անդամների հանդիպում՝ քննարկելու Երևան քաղաքում թափառող շների մոտ լեյշմանիոզ հիվանդության տարածման կանխարգելման հարցերը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ